

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

ՈՒՏՈՒՄՆԱԾՈՒԹՅԱՆ ակտիվ մեթոդների կիրառումը կենսաբանության դասերին

Մասնակից՝ Հայրապետյան Գայանե

Քաջարանի N5 մ/դ.

Ղեկավար՝ Ն. Ջավադյան

Վերապատրաստում իրականացնող կազմակերպություն՝
Կապանի թիվ 2 ավագ դպրոց
2022 թ.

Ուսումնառության ակտիվ մեթոդների կիրառումը կենսաբանության դասերին



Նպատակը Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսումնառության ակտիվ մեթոդների ազդեցությունը աշակերտների մոտիվացիայի և ակտիվության վրա:

Խնդիրը Ուսումնասիրելով համապատասխան գրականություն՝ մշակել 4 դասի պլան, որից մեկը գործնական է: Դրանցով փորձել ցույց տալ, թե որքանով են արդյունավետ ավանդական և ժամանակակից մեթոդները:

Ժամանակակից կրթությունը լուրջ մարտահրավերներ է նետում ուսուցիչին: Այսօր ուսուցիչը գիտելիքի միակ աղբյուրը չէ աշակերտի համար: Ուստի նրանից պահանջվում է լինել ոչ միայն գիտելիք տվող, այլ ուղղորդող, սովորեցնող, մոտիվացնող, հմուտ և գիտակից անհատ ձևավորող, աշակերտի ինքնուրույնությունը և քննադատական մտածողությունը խթանող: Իր բազմաբովանդակ գործունեությունը արդյունավետ ծավալելու համար ուսուցիչը պետք է կարողանա լինել ճկուն, տիրապետի ավանդական և ժամանակակից մեթոդները: Կարողանա հմտորեն կիրառել այդ մեթոդները և աշակերտին մղի ակտիվ գործունեությանը: Այժմ մեր խնդիրն է անդրադառնալ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդներին, ցույց տալ դրանց կիրառման արդյունավետությունը ու նպատակահարմարությունը: Կարևոր է դիտարկել, թե այդ մեթոդները որքանով են նպաստում ակտիվ և ինքնուրույն գործունեությանը:

Ակտիվ ուսուցումը այնպիսի մեթոդների համակարգ է, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական և նոր, ժամանակակից մեթոդներ:

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության /գիտելիք/ պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

- Ավանդական մեթոդի նյութը ծավալուն է, հաճախ կարևորը ու անկարևորը տարբերակված չեն: Ուսումնառության նպատակները ոչ միշտ են չափելի և թափանցիկ.



- Շեշտը դրվում է գիտելիքների, հմտությունների ուսուցման վրա.
- Կարևորվում է ուսումնական առարկաների անջատ ուսուցումը.
- Առավել կարևորվում է ուսումնական նյութի վերատադրությունը՝ առանց մտածողության և գործնական հմտությունների հետ կապակցելու:
- Հիմնականում օգտագործվում է միավորային գնահատումը: Այն օգտագործվում է սովորողներին դասդասելու համար:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական ակտիվ մասնակցությունը:

Ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդով: Դրանց հետ կիրառում ենք նաև ավանդական մեթոդներ, ինչպիսին են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունի ուսուցման գործընթացում:

Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցիչ-սովորողի միջև, այնպես էլ սովորող-սովորողի միջև երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտություններ, խնդիրը միասին լուծելու կարողությունները, զարգանում է սովորողների խոսքը, սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերած գիտելիքները:

Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման գործընթացում ըդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները /խոսքը, հիշողությունը, երևակայությունը/:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Ուսումնական գործընթացում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց:

Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը. Գործընթացների ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում գննական զգայական ձևով ծանոթացնելն է:

Պատկերագարողումը երևույթների ցուցադրումն ու ընկալումը սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը փոխադեցությունն բառն է, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցերի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ է տալիս: Որը հետագայում անվանվեց "Ինտերակտիվ մեթոդներ բառակապակցությունը: Դաս-դասարանային համակարգի ուսացման գործնաչափ կառուցվածքային հիմքում դրված է փոխադեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճկատով, այսինքն բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Այս պարապմունքի ձևին անվանում են խմբային: Այս պարապմունքների լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխադեցության կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավականին արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման այս ձևը համամատելով խաղը և ուսումնական գործնաչափը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական գործնաչափը, ավելի ճիշտ, օգտագործել գործունեությունը կրթական նպատակին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն՝ ազատ իրականացնելու իր կարողությունը և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ:

Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում,
- ճանաչողական գործնաչափների զարգացումը՝ խոսք, հիշողություն, մտածողություն,
- Ինքնագործունեության խթանում,
- ուսումնական նյութի առավելագույն մասի յուրացում,
- ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացումը:
- ուսումնական նյութը կառուցված է առանցքային կոմպետենցիաների և գաղափարների շուրջ:
- ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ սովորողների համար:
- գիտելիքներից և հմտություններից զատ կարևորվում է արժեքները ու վերաբերմունքը:
- առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են նաև վերառարկայական հմտություններ:

- կարևորում է բովանդակության խորը ըմբռնումը և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ:
- շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա, գնահատկանն օգտագործվում է սովորողների չափելու համար:



ՎԵՐԸ ՆՇՎԱՅ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

ԴԱՍ 1

Դասի թեման -Սնկերի ընդհանուր բնութագիրը և կառուցվածքը: Գլխակավոր սնկեր

Նպատակը` Աշակերտը կհիմանա

- սնկերի թագավորության առանձնահատկությունները
- գլխարկավոր սնկերի կառուցվածքը, բազմացումը, սննդառությունը, նշանակությունը:

Վերջնարդյունքը

- համեմատել սնկերի թագավորությունը բույսերի և կենդանիների թագավորության հետ,
- ուտելի սնկերը տարբերել թունավորից,
- ճանաչել շրջապատում տարածված սնկերը,
- բացատրել սիմբիոզ հասկացությունը,
- պահպանել նախազգուշական միջոցառումներ սնկերով թունավորվելուց:

Կարժևորի

- սնկերի դերը կենդանի օրգանիզմների համակարգում,
- գլխարկավոր սնկերի դերը` որպես սննդամթերք

Անրաժեշտ նյութերը`

դասագիրք, պաստառ, մուլյաժներ, նկարներ:

Դասի ընթացքը

Անդրադառնալ նախորդ դասի հանձնարարականին:



Խթանման փուլ մեթոդ /Մտքերի տարափ/ (7 թույլ)

Դասը սկսել կենդանի օրգանիզմների դասակարգումը վերհիշելով:

Ռեդդորդոդ հարց`/ինչու՞ են սնկերն ընդգրկված առանձին թագավորության մեջ/:

Իմաստի ընկալման փուլ

Հանձնարարել բոլորին դասը կարդալ`կիրառելով /փոխգործուն նշանների համակարգ/ մեթոդը:

Ընթերցելով նյութը`սովորողները նշումներ են կատարում`օգտագործելով ՓԳՅ-ի նշանները:

V- հաստատում է իմացածը /գիտեմ/

+ նոր տեղեկություն է /չգիտեմ/

- իմացածին հակասում է

? անհասկանալի է

! հետաքրքիր է, կարելի է քննարկել

Ռեսուլտից մեկնաբանում է -, -? և i նշաններով առաջադրված հարցերը: Յուրաքանչյուր աշակերտ լրացնում է աղյուսակը, հետո քննարկում են : Աշակերտներին հանձնարարել լրացնել նախապես կազմված հետևյալ առաջադրանքները,

2.Իմաստի ընկալման փուլում կիրառել եմ ՓգՅ մեթոդը: (20 թույլ)

V գիտեմ	+ չգիտեմ	- իմացած. հակասում է	? անհասկանալի է	I հետաքրքիր է կարելի է քննարկել

Բոլոր աշակերտներին հանձնարարվեց կարդալ նյութը համապատասխան սյուներում կատարել նշումներ: Այնուհետև կատարվեց մտքերի փոխանակություն և նյութի քննարկում: Հանձնարարվեց 3 և 4 սյուները լրացնելու համար տեղեկատվություններ հավաքել այլ աղբյուրներից, գիտելիքները խորացնելու նպատակով: Այս մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչ աշակերտ փոխհարաբերությունը հավասար մակարդակների վրա են սուբյեկտ- սուբյեկտային փոխհարաբերությունն:

1.աղյուսակ

	Սնկերի նմանությունը բույսերին
1	
2	
3	
4	
5	
6	

2.աղյուսակ

	Սնկերի նմանությունը կենդանիներին
1	
2	
3	
4	
5	
6	

3.գծպատկեր

4.ներկայացնել օգտակար սնկերի ոլորտները:

Կշռադատման փուլ (15 րոպե)

Հստակեցնել խթանման փուլում առաջադրված հարցերի պատասխանները: Ըստ լրացված աղյուսակների տվյալների, հիմնավորել սնկերի ընդգրկվածությունը առանձին թագավորության մեջ:

Հայտորոշիչ թեստ`

Նշել սնկերին վերաբերող ճիշտ և սխալ պատասխաններ`

ա.գլխարկավոր սնկերի պտղամարմինը կազմված է գլխարկից և ոտիկից


բ.բուլոր սնկերը սապրոֆիտներ են

գ.սնկերը արտազատում են միզանյութ

դ.սնկերի մարմնում ավելի շատ կուտակվում է օսլա

ե.բոլոր սնկերը բազմաբջիջ են

գ.սնկերը հետերոտրոֆ են



Այս մեթոդով հնարավոր եղավ լիարժեքորեն պարզել, թե աշակերտները որքանով են յուրացրել նյութը: Սովորողները գնահատվեցին ձևավորող գնահատմամբ:

Տնային առաջադրանք (3 թույլ)

- 1) Նկարագրել որևէ գլխարկավոր սունկ:
- 2) Գրել փոքրիկ պատմվածք "" Անձրևն ու սունկը "" :

Եզրակացություն

Սնկերի ընդհանուր բնութագիր թեմայի ուսուցումը իրականացրել եմ՝ կիրառելով ժամանակակից մեթոդներ /Մտքերի տրափ/,/ՓԳՅ / և հայտորոշիչ թեստ:

1.Մտքերի տրափ մեթոդի ժամանակ յուրաքանչյուր աշակերտ արտահայտում էր իր սեփական տեսակետը առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի:Մեթոդի նպատակն է նոր գաղափարների ի հայտ գալու խմբի համատեղ աշխատանքում: Խթանում է ստեղծագործական մտածողությունը: Միտքը միտք է ծնում: Պարզ մեթոդ է , հեշտ հասկանալի և հեշտ կիրառելի:

2. Իմաստի ընկալման փուլում կիրառել եմ ՓԳՅ (փոխներգործուն գրառումների համակարգ) մեթոդը: Դասարանի բոլոր աշակերտներին հանձնարարել եմ կարդալ նյութը՝ կիրառելով ՓԳՅ մեթոդը. ընթերցելով նյութը՝ սովորողները կատարել են նշումներ (vգիտեմ, + չգիտեմ, - իմացածին հակասում է, ? անհասկանալի է, ! հետաքրքիր է, կարելի է քննարկել : Այս նշանների օգտագործումը ընթերցանության ընթացքում նպաստում է ակտիվ, քննադատական ուսուցմանը՝ նորը, հակասականը և անհասկանալին ընդգծելու առումներով: ՓԳՅ մեթոդը օգտակար է ,որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և կազմի աղյուսակ:

3 Հայտորոշիչ թեստը հնարավորություն է տալիս իրականացնել անհատական ստուգում, ոչ մի աշակերտ չի անտեսվում, լիարժեքորեն պարզ է, թե աշակերտները որքանով են յուրացրել նյութը:



Դաս 2

Դասի թեմա

Բուսական, սնկային և կենդանական բջիջների պատրաստի մանրապատրաստուկների պատրաստում և դիտում:

Աշխատանքի նպատակը

Դտել և նկարագրել, սնկային, կենդանական բջիջները, նշել դրանց նմանությունները և տարբերությունները: Ամրացնել մանրադիտակի հետ աշխատանքի հմտությունը, դիտարկման ուշադրությունը և համեմատման ունակությունը:

Նյութեր և սարքեր (ծանոթացում) (5 րոպե)



Սոխի թեփուկ, բորբոսասունկ և կենդանական <<Էպիթելային հյուսվածքի>> բջիջների պատրաստի մանրապատրաստուկներ, թորած ջուր, ապակյա թասիկներ, լաբորատոր գործիքներ, կաթոցիչ, առարկայակիր, և ծածկող ապակիներ, դպրոցական լուսային մանրադիտակներ, բուսական, սնկային և կենդանական բջիջների կառուցվածքների մասին նկարներ, աղյուսակներ մոդուլներ:

Անվտանգության տեխնիկա (5 րոպե)

Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները, ծնոթացում:

Աշխատանքի ընթացքը (35 րոպե)

Պատրաստել սոխի թեփուկ, որն է խմորասնկի և բակտերիայի մանրապատրաստուկներ՝ ասեղի և նշտարի օգնությամբ, առարկայակիր ապակու վրա: Վերցնել նաև կենդանական(Էպիթելային հյուսվածքի) բջիջների պատրաստի մանրապատրաստուկը: Պատկերը ցայտուն տեսնելու համար ավելացնել յոդի նոսր լուծույթի մի կաթիլ:

Յուրաքանչյուր աշակերտին տալ մանրադիտակ: Հանձնարարել մանրադիտակի օգնությամբ գտնել՝




- 1.բուսական (սոխի թեփուկի) բջիջներ,
- 2.սնկային (խմորաունկ) բջիջներ

3. կենդանական (Էպիթելային հյուսվածք) բջիջների՝ պատրաստի մանրապատրաստուկներով:

1 Սոխի թեփուկից առանձնացնել բարակ թաղանթ: Դնել առարկայակիր ապակու վրա, կաթեցնել մեկ կաթիլ ջուր և յոդ ծածկել ծածկապակիով: Ջուրը հեռացնել ֆիլտրի թղթով: Մանրադիտակի օգնությամբ գտնել սոխի բջիջները:

2. Նախօրոք ստանալ խմորասունկ (խմորասունկը հասունացնել) և դիտել:

3. Դիտել կենդանական բջիջների (Էպիթելային հյուսվածքի) պատրաստի մանրապատրաստուկները մանրադիտակով:

Բջիջ	Բջջի համեմատական չափը	Բջջի ձևը	Բջջապատի առկայությունը և հաստությունը	Բջջակորիզի առկայությունը, ձևը և դիրքը բջջում	Օրգանոիդների առկայությունը	
					պլաստիդներ խորշեր վակուլներ	այլ օրգանոիդներ
Բուսական						
Մսկային						
Կենդանական						

Գործնական աշխատանքի գնահատման սանդղակ

Տրոպե

	3	4	5	6	7	8	9
Գնահատման ենթակա բաղադրիչներ							
Սանդղակային միավոր	2	1	1	2	2	1	1

Եզրակացություն

Դասը իրականացավ ավանդական մեթոդով, աշակերտը չի կարող ինքնուրույն կատարել փորձ: Նմանատիպ դասերը ուսուցչակենտրոն են :Ցուցադրությունը օբյեկտներին բնական վիճակում գննական զգայական ձևով ծանոթացնելն է:



ԴԱՍ 3

Դասի թեման -----Կլոր որդերի տիպի ընդհանուր բնութագիրը

Դասի նպատակը` Աշակերտը կհիմանա

- կլոր որդերի կառուցվածքային առանձնահատկությունները, կենսակերպը,
- մարդու ասկարիդը, որպես մակաբույծ կյանք վարող որդի

Վերջնարդյունք

- պայթարել մակաբույծ որդերի դեմ;
- Կկարևորի հիգիենան` որպես մակաբույծ որդերից պաշտպանվելու միջոց:

Անհրաժեշտ նյութեր

Մարդու ասկարիդի կառուցվածքի ցուադրումը և բազմացումը պատկերող պաստառ, թաց պատրաստուկներ:

Դասի ընթացքը`

Անդրադառնալ դասի հանձնարարականներին:

Խթանման փուլ` մեթոդ <<Մտազրոհ>> (7 րոպե)

Ուղղորդող փուլ` <<Ի՞նչ է մակաբուծությունը>>

Իմաստի ընկալման փուլ (20 րոպե)

Սովորողները կարդում են դասանյութը և լրացնում տվյալ աղյուսակը

Օրգան համակարգեր	Կառուցվածքը
Մարսողական համակարգ	

Կշռադատման փուլ` (15 րոպե)

<<Ապագայի անիվ>>մեթոդ

Հայտորոշիչ թեստ

1, Ի՞նչ կամ ո՞վ է լյարդի ծծանի միջակ տերը.

1. մարդը
2. ձուկը
3. կովը
4. լճախիտունը

2, Ի՞նչը կամ ո՞վ է եզան երիզորդի վերջնական տերը.

1. մարդ
2. ձուկը
3. կովը
4. լճախիտունը

3, Առաջնային խոռոչ ունեցող չհատվածավորված մարմնով որդերը դասվում են.

1. Կլոր
2. Տափակ
3. Օղակավոր
4. Բոլոր թվարկված որդերին:

Տնային հանձնարարություն

Վենի դիագրամի օգնությամբ համեմատել կլոր որդերը տափակ որդերի հետ:


Կլոր որդեր թեմայի ուսուցմը իրականացրել եմ՝ կիրառելով <<Վենի դիագրամ>>, <<Ապագայի անիվ>> և <<Մտագրոհ>> մեթոդները:

1-ին մեթոդի ժամանակ հստակ առանձնացվում և կարևորվում են հասկաությունների ընդհանրությունները և շեշտվում յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները:

2. Մեթոդը տալիս է հնարավորություն ստեղծել պատճառահետևանքային կապ, որի շնորհիվ զարգանում է քննադատական մտածողությունը. ինքնուրույն կարողանում է բացատրել երևույթները և վեր հանել հետևանքները:

ԴԱՍ 4

Դասի թեմա - Մարդու օրգանիզմի բջջային կառուցվածքը



Դասի նպատակը Աշակերտը կհմանա՝

- Ի՞նչ է բջիջը
- Բջջի հիմնական բաղադրամասերը օրգանոիդները

- Դևթ-ի մոլեկուլի դերը բջջում

Վերջնարդյունքը`

- Բացատրել բջջի կառուցվածքը
- Բջիջների ձևերը և մեծությունները, որը պայմանավորված է նրաց ֆունկցիայով և կենսագործունեությամբ:

Կկարևորի Բջիջը կենդանի նյութի տարրական կառուցվածքային գործառնական և գենետիկական միավորն է:

Օրգանիզմը բարդ, ամբողջական, ինքնակարգավորող և ինքնավերականգնվող համակարգ է:

Անհրաժեշտ նյութեր` դասագիրք, պաստառներ, ցուցապաստառներ, գունավոր մարկերներ

Դասի ընթացքը

Անդրադառնալ նախորդ դասի հանձնարարականին:

Խթանման փուլ .մեթոդ` <<Մտքերի տարափ>> (7 րոպե)

Ուղղորդող հարցեր

Ի՞նչ է ձեզ հայտնի բջջի կառուցվածքի և ֆունկցիաների մասին:

Ի՞նչ կենսական հիմնական հատկություններ ունի բջիջը:

Ի՞նչ է նյութափոխանակությունը:

Ի՞նչ է ստանում օրգանիզմը նյութափեխանակության հետևանքով:

Իմաստի ընկալման փուլ` մեթոդ <<դասախոսություն>>

20

րոպե

Դասը իրականացավ ավանդական մեթոդով (ուսուցչակենտրոն):

Նյութի բարդության և շատ տերմինների պատճառով, աշակերտը ինքնուրույն չի կարող լիարժեքորեն յուրացնել, կարիք ունի նյութի մանրակրկիտ բացատրության: Ուստի նյութը բացատրվեց ըստ պլանի հաջորդականությամբ, մտածելով յուրաքանչյուր քայլի մասին, կրկին անդառնալով դասախոսության հանգուցային մասերին:

Կշռադատման փուլ

15րոպե

Գիտելիքների յուրացման մակարդակը ստուգվեց դասի վերջում տրված հարցերի միջոցով, որոնք տրվում են բանավոր կերպով ամբողջ դասարանին: Պատկերը հստակ և չափելի չէ: Ակտիվ աշակերտները պատասխանում են հարցերին , իսկ պասիվը << թաքնվում>> նրանց հետևում:


Ստացվում է, որ հայտորոշիչ թեստը հնարավորություն է տալիս իրականացնել անհատական ստուգում, ոչ մի աշակերտ չի անտեսվում, իսկ ավանդական մեթոդով ստուգումը ամբողջական պատկերը չի տալիս:

Աշակերտները գնահատվեցին միավորային գնահատականներով: 5րոպե

Եզրակացություն

Յուրաքանչյուր ժամանակ ունի իր պահանջները և կրթական համակարգը առաջին հերթին պետք է ընդառաջ գնա դարի մարտահրավերներին: Չլինելով տեղեկության միակ աղբյուրը՝ ուսուցիչը պետք է, մասնագիտական գիտելիքներից բացի, տիրապետի բազմազան մեթոդների և հնարների, որպեսզի խթանի աշակերտի հետաքրքրությունը, սերը առարկայի հանդեպ, ապահովի նրա ընդգրկվածությունն ու ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին: Մեր ուսումնասիրությունը փաստում է, որ ուսումնառության ակտիվ մեթոդները տալիս են այդ հնարավորությունը. դասը դառնում է ժամանակակից, հետաքրքիր, խթանում է աշակերտների ակտիվությունը, ակադեմիական գիտելիքներից բացի՝ նրանց մեջ ձևավորում և զարգանում է բազմաթիվ հմտություններ, կարողունակություններ, որոնք ավելի անհրաժեշտ և կիրառելի են կյանքում: Աշակերտը դառնում է համագործակցող, օժանդակող, կարեկցող, ապրումակցող: Երբեմն որոշ բարդ թեմաներ ուսումնասիրելիս նպատակահարմար է լինում կիրառել ավանդական մեթոդներ, որպեսզի նյութն ամբողջությամբ յուրացվի աշակերտի կողմից: Սակայն, կարծում են, ժամանակակից կրթության խնդիրն է պատրաստել ոչ միայն տեսական գիտելիքներով գերծանրաբեռնված, այլև ստացած գիտելիքները կյանքում հմտորեն կիրառելու ունակությամբ օժտված անհատներ, որոնք կկարողանան ինքնաիրացվել: Ուստի ժամանակակից աշակերտի կրթական կարիքները բավարարելու համար ուսուցչից պահանջվում է լինել բանիմաց, շրջահայաց, ճկուն, մեթոդապես և տեխնոլոգիապես զարգացած;

Աշակերտների շրջանում իրականացված հարցումները ևս ցույց են տալիս, որ ուսուցման ակտիվ մեթոդները հետաքրքիր են, գրավիչ, ոգևորող, և իրենք ավելի հաճույքով են մասնակցում նման դասերին և պակաս ակտիվություն են ցուցաբերում ավանդական մեթոդներով անցկացվող դասերին;



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Կենսաբանության մեթոդական ձեռնարկ /Անահիտ Գասպարյան և ուրիշներ/
- Կենսաբանության դասագրքեր
- https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80